ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

«Հետք» էլեկտրոնային օրաթերթի լրագրող
Արմեն Միրզոյանին
ք.Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ,
էլ. փոստ՝ armenmirzoiian@gmail.com

Հարգելի՛ Ա. Միրզոյան,

Ձեր կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ստացված՝ 20.12.2021թ. հարցման կապակցությամբ հայտնում ենք, որ այլ էլեկտրոնային լրատվամիջոցում դեռևս 24.11.2021թ. հրապարակված «Pegasus ծրագրով հարձակում է եղել և՛ իմ, և՛ ընտանիքիս ու մերձավորներիս վրա. Վանեցյանը նամակ է ստացել Apple-ից» վերտառությամբ հրապարակումն ուղարկվել է ՀՀ ԱԱԾ՝ դրանում առկա տեղեկությունները ստուգելու նպատակով:

Ստացված տեղկատվության համաձայն՝ ՀՀ ԱԱԾ-ն Pegasus ծրագրա-ապարատային համակարգ ձեռք չի բերել և վերոնշյալ ծրագրի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ-ում տվյալներ առկա չեն:

Միաժամանակ, Ձեր հարցմամբ հայցվող մյուս տեղեկատվությունն ստուգելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:

ՀՀ դատախազության
հանրային կապերի բաժին